

Տարեկան գինը 10 բուլբ, 4 կս տարվանը 6 բուլբ, և անհատական համարները 5 կոպեկով:

Այս ֆիլիսոփա գրվում է միմյան խորագրաբան միջ:

(Տարաբաղադրակի գրվում է ուղղակի
Тифлис. Редакция „Мусако“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դպրի կիտակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Տարեկան մտքերը—ն է բք ին տեսութիւնը:
Ներքին լուրերը—Արտաքին տեսութիւնը:
Լճագործի միտքնգ—ՎՄշակիչ հեռագիրները—Պայ-
տարարութիւնները—Բանասիրական: Նամակ
Թիւրքիայից:

ՏԱՐԱԿԱՆ ՄՏՔԵՐ

Ֆրանսիացի երեւելի հեղինակ Պրուդոն որ և է միտք, կամ ճշմարտութիւն իր գրքի մէջ բացատրելուց յետոյ, շատ անգամ աւելացնում էր: «Իսկ կատարեալ դժբաղդութիւն է, որ մեր լուսաւորված տաան և իննեքորդ դարում մարդը ստիպված է մի միտք յայտնելու համար բացատրել ժամանակակից հասարակութեանը ամենատարրական մտքերը:»

Եթէ յիշենք որդ թուականների Ֆրանսիան այդ դրութեան մէջ էր, մեր ողորմելի հայոց հասարակութիւնը աւելի էլ պէտք

ունի ամենատարրական մտքերի բացատրելուն...

Այդ տարրական մտքերից միւնը կրօնի ու ազգութեան տարբերութեան միտքն է:

Ինչքան էլ բացատրես, որ կրօնը և ազգութիւնը ջոկ բաներ են—դարձեալ մերոնք չեն կամենում հասկանալ, դարձեալ գտնվում են կամ ընթափոխներ, կամ անբարեմիտ մարդիկ, որոնք աշխատում են խառնակութիւն դրցել ժողովրդի մէջ, մտրեցնել նրան, զարթեցնել նրա մէջ կոյր, անողորմ ֆանատիկոսութիւն, ջանալով հասկացնել ամբողին, որ երբ մի մարդ փոխում է իր հաւատը, նա դորանով փոխում է և իր ազգութիւնը:

Եւ ահա մարդը ստիպված է անդադար բացատրել ժողովրդին, ինչպէս մանուկներին, ամենատարրական մտքեր՝ մտրեցնող, խառ-

նակիչ, փաստակար և հասարակական մտքերի ամբողի մէջ տարածվելուն առաջն առնելու համար:

Ահա այդ տարրական մտքերը: Կրօնը, հաւատը՝ մարդու համոզմունքն է, նա ցեղական յատկութիւն չէ, նա կապված չէ օրգանական կապերով ցեղի, ազգութեան, կամ հայրենի հողի հետ:

Որպէս համոզմունք, նա այս կամ այն ձևի մէջ մշտական, անփոփոխ չէ: Ինչպէս համոզմունքը կարելի է փոխել, այնպէս էլ կարելի է փոխել կրօնը և դորանով ոչ հայրենիքն է փոխվում, ոչ ցեղական յատկութիւնը, ոչ ազգութիւնը, ոչ էլ լեզուն:

Հայրենիքը, ցեղը, ազգութիւնը և լեզուն անփոփոխ են, իսկ եթէ փոխվեն, դորանով փաստ են բերում նոյն իսկ ազգութեան գոյութեանը:

Մարդը կարող է, այո՛, կորցնել իր ցեղական յատկութիւնները, մոռանալ իր լեզուն, թողնել իր հայրենիքը,—բայց այն ժամանակ նա կորցնում է և իր ազգութիւնը:

Անդիլացին գաղթել է Ամերիկա, նա ուրեմն կորցրել է իր հայրենիքը, բայց պահպանել է իր հայրենի անդիլական լեզուն: Եւ ցեղով դարձեալ անդիլացի է մնում, բայց ազգութեամբ ամերիկացի է դարձել: Կորցնելով հայրենիքը և պահպանելով միայն լեզուն, մարդը կորցնում է իր ազգութիւնը: Բայց ամերիկացիները ստեղծեցին մի նոր ազգութիւն որովհետեւ ստեղծեցին մի նոր հայրենիք:

Վերադառնալով ուրիշ օրինակ: Հրէան թողել է իր հայրենիքը, ցիր ու ցան է եղել ամբողջ աշխարհում, բայց անխախտ պահպանել է իր կրօնը: Եւ ահա հր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Վան, մայիս 10/22

Թէպէտ բաւական առնէ է որ «Մշակ» և ուստի այն «ո և է լրագիրների թիւրքիա մասին արդիւնաւոր լինելով չենք կարողալ, բայց հաւատարմութե չայտատանի և վասպուրականի սովին նկատմամբ պէտք եղած տեղեկութիւններն հրատարակուած կը լինին նոցա մէջ, ուստի նոր բան մի յայտնած չը պիտի լինի, եթէ զբրեմ այստեղ թէ սով կայ վասպուրական և ու լին անելի կարեւոր կը համարիմ 1. սովին պատճառներն, 2. զայն վերցնելու կամ մեղմացնելու համար ձեռք առնուած միջոցներն և սովին տուած հարուածներն նկարագրել այս նամակին մէջ, որով զլրատարարները զլրատոր բաժանում կունենայ:

1. Ուստի ծագեցաւ սովը.—Ոչ չորովին, ոչ դաշտավայրերն, ոչ մարախ և ոչ այլ ինչ ընական պատահար չեն և չեն կրնար պատճառ համարուիլ կրտսէր սովին, այլ նորա միակ զլրատոր պատճառն նոյն իսկ թիւրք կառավարութեան պաշտօնեաների վատ և ժողովրդական դիտաւորութիւնն և անհրաժեշտ կամ հաճելի անհրաժեշտ է, վասն զի ոչ միայն թիւրքիայի քրդաց և աւաղակաց անսանձ և համարձակ կողպտել, զերել, զերդել հայերը և նոցա ինչքերը, նոցա լծակներն, նոցա մած ու արօրն (մինչ իսկ) այրել, ապականել դաշտերն, հունձրելն և այլն և այլն, այլ նաև յայտնի և համարձակ պաշտպանելն ու քաջաբերելն ամեն այն քրդերը, որք ձերբակալ եղան մերթ ընդ մերթ վերին գաղտնեաց անձնաթ ստորին պաշտօնեից ձեռքով: Պաշտպանելն այդպիսի վայրերն աւաղակներն, ոմանց ամական նուէրներ տուելն, ոմանց

ամական կապելն, ուրիշներն ցեղապետ կարգելն, վերջապէս վարձատրելն մինչև անգամ փոխանակ պատճելու, զայդ ըրին որպէս զի աւելի քաջաբերելն և աւելի փութան յարձակիլ հայերը և նոցա ստացուածքները փճացնելու, բնախնդ անելու: Կառավարութեան կողմէն տեսնուած այսպիսի յայտնի պաշտպանութեան համար արշաւեցին քրդերն համարձակ, աւերեցին և ահա ներկայ սովին մի և առաջին և զլրատոր պատճառ եղան: Չի ոչ միայն ջնջուեցան հայոց հունձքի վեր ունեցած արմիրը, զորս բնաւ պակաս չեն անել իրենց ամբարէն, այլ և չը համարձակուեցան սովորականին համեմատ առատ հունձք անել և միայն այնչափ արին, որչափ ներեց իրենց ժամանակ քրդաց յարձակումէն պարտալ եղած առնէ և որչափ իւրաքանչիւր երկրագործ ընտանիք բաւական համար լից իւր անդամաց պաշար լինելու համար: Նոցա մէջ մասն դարձեալ փճացաւ քրդաց ասպատակող ոտից ի կոխան, իսկ մէջ մասն երաշուտեամբ ոչնչացան, մնացած մէջ մասն ալ անբաւական եղաւ իւրաքանչիւր ընտանիքի: Իսկ թէ կանխաւ ըստ սովորութեան լեցուն լինէին նոցա շանձաւաններն, երեք տարի անգամ երաշտ լինէր և ոչնչն նոր արմիրը առաջ չը գար, դարձեալ այսպիսի սով չէր լինի, վասն զի ուրիշ շատ անգամ գրեթէ երեք տարի միանգամ վաստորականի երկիրն երաշտ կը մնայ այնչափ, որչափ 1879-ին մնաց, սակայն արմտեաց դնոյն վրա 10-ին կէս հազիւ յաւելում կը բերէ, իսկ նախորդ տարու երաշտութիւնն ամենին աւելի չէր քան սովորական երաշտներն:

Բայց այտի եղած երաշտութիւնն ալ ընդհանուր չէր և Արձաւ ալ զաւառաց հունձքերն սովորականէն շատ աւելի եղած էին, որք ամեն անգամ բաւական են կերակրել վաստորականի ժողովուրդը, կուղէ, մի տեղ արմիր չէլէ: Նոյնպէս այս տարի կատարելապէս պիտի բաւէին մեզ, եթէ ծախուէին մեզ կամ թողութիւն, գիտէք: Վաստորականէն դուրս հեռաբնակ բոլոր քրդաց մինչև Բաքիդին և Նինուէի բերան բնակողաց թղթատուութիւն արեց որ եկան գնեցին այստեղ գտնուած ամբողջ արմիրը հակառակ ժողովրդեան յաճախակի թախանձանաց և բողոք-

ներուն, որք սովալ կառավարութեան մատուցուեցան խնդրելով, որ արդէլ արմտեաց արտահանութիւնը, Բայց մտիկ չարաւ: Այլ ընդհակառակն երբ անհատականաց արմիրի սպառելն տեսաւ, եկաւ իւր ամբարի մէջ գտնուած ցորենն ալ ծախեց քրդերուն մինչ պարտաւոր էր սոված ժողովրդին փոխ տալ և փութելու մէջ ծախուող առանձն հաց հանել: Բայց զայդ ամեն չը մտածեց, այլ իւր միակ խորհուրդ այն էր, որ քրդերն հաց ունենան, ապրին, իսկ հայերը անկերակուր մնալով սովու բռնուին ու ջարդուին: Յայտնի կերպով հասարակաց կարծիքը խօսից առարկայ արեւ էր այս դիտումն որ կառավարութիւնն ունէր: Մանաւոր դարմանալին այս է որ, երբ ձմեռն սկսաւ երեւալ ու քրդերն դաղրեցուցին ցորեն տանելն, կառավարութիւնն չը հաճեցաւ մի և նոյն գնով կամ գէթ աւելի գնով արմիր ծախել նաև հայոց, որք յուսալով թէ քրդաց դաղարումէն ետք առանձն պիտի լինի, սպասեր էին մինչ ձմեռն բերան, որպէս զի այն առնէ գնեն, բնաւ չէին կրնար ենթադրել թէ կառավարութիւնն այդ աստիճան խտրութիւն պիտի անէ և իրենց հաց չը տայ, իրենց փոխ իւրեանց քրդերով լցրել էին նոյն ամբարը: Անօրինակ հրէշութիւն...

2. Սովու բարձման կամ թեթեւացման միջոցն և բն: Թէ անցեալ և թէ ժամանակակից պատմութիւնն մեզ կուսուցանէ թէ ամեն ժամանակ երբ ու իցէ երկրի մէջ սով պատահի, նորա բարձման համար զլրատոր աշխատողն երկրին կառավարութիւնն կը լինի: Իսկ թիւրքիոյ մէջ ընդհակառակն է, ոչ միայն պաշտօնեաներն չաշխատին սովը բառնալ, այլ նոյն իսկ նորա պատճառ և նոյն իսկ իրենց ամանաւոր ջանքից արդիւնքն է նոյն սովը: Հետեալպէս ինչու պիտի աշխատէին զայն բառնալ կամ մեղմել: Այնպէս վերջերը ժողովրդին լիւր 9 զորուի ծախել չը խղճահարուեցան 20 տարեկ հետէ բերդին մէջ զլրուած այն պէքս մէջին և բն, որք ձիւտ կու պրի համ և հոտ ու գոյն ունենալով շատերը մեղցուցին և նաև այն պէքս մէջին և բն, զորս պատնաղով տարին ժողովրդէն լիւր 30 փարաչի գնած էր, բայց զեռ գին չէր վճարած և դեռ ցայսօր չէ վճարած: Երբ անոնք ըստ պառնեցան, ժողովուրդը խնդրեց որ կառավար-

ական ամբարին մէջ մնացած անհամար արմիրը հրապարակ թափելով տեղացուց ծախել բարեհաճին, յանձն չառան, նկատելով որ հայերն ալ գնելու միջոց կունենան, որով իրենց մտադրութիւնը—հայերն ջնջել բռնի սովով—ի դերն պիտի եղնէ: Երկրագործ գիւղացին եկաւ աղաչել որ իւր քրդանչիւր գիւղի տասանորդ արմիրը, որ դեռ գիւղին մէջ էր, գոյն գիւղի բնակաց փոխ տրամի մինչև յաջորդ հնձոյ ժամանակ, բայց կառավարութիւնն այդ հնորն միայն քրդաբնակ գիւղերուն արաւ, իսկ հայոց ոչ: Ի վերջոյ տեսնելով թէ աշխարհաբարդ կը խայտառակուի այս յայտնի երեսպաշտութիւնը, ստիպուեցաւ ակամայ 100-ին 1 գիւղին, որ հայաբնակ լինի, արմիրը փոխ տալ, բայց այնչափ միայն որ անոնք լինի թէ հայոց ալ փոխ հաց տրուեցաւ, իսկ այն տրուածներն բաղդաղամբ քրդաց փոփ տրուածներուն 100-ին 1/3-ին: Բայց փող տալէ, բաղդաթիւ թուրք գաղթականաց աշուհէն սկսեալ 90-ի հաց կը մատակարարէ, իսկ հայոց մինչև այսօր ամենին մէկ օխա անգամ հաց տրուած չէ ձրի, այն հայոց որ վաստակած են հացերը, իսկ այժմ իրենց փոխ անգամ չը տրուի, իսկ թուրք և քրդեր գաղթականաց ձրի կը տրուի իրենց աչքին առաջ և իրենց անօթութիւնէ տանջուած ժամանակ: Ամէնն այս չէ. մինչ ուրիշ կառավարութիւններ սովէ բռնուած իրենց հպատակաց գործ ու դրամ կուտան որ սովամահ չը լինի, մինչև օտար երկիրներէ հաց կը հասցունեն ձանապարհներն հարթելով, մեր կառավարութիւնն տակաւին մինչ օրս (մայիս 1) և ոչ մի օխա ցորեն կամ այլը վանալու անակալութեան դուրսի սահմաններէն չը հասուց այստեղ, այլ ընդհակառակն արդիւնք եղաւ որ Մուշէն ու Բաղդէն հաց չեկաւ այստեղ, թէ և այն տեղեր առատ են, թէ և Մուշի մէջ մեծաքանակ ցորեն գտնուած էր նոյն իսկ ձմեռն մէջ վանայ համար սովելոց խնամատու մասնաժողովին ստակով: Արատախոյիլ, խարբերդի, Երզնկայի և այլ գաւառաց մէջ արմտեաց մեծ առատութիւն կայ, բայց կառավարութիւնն չը բարեհաճեցաւ դեռ վան և ուրիշ սոված գաւառները հաց փոխադրել տալ այնտեղեկէն: Կառավարութիւնը մեծահաշակ ձայն հանել տուաւ լրագրաց մէջ թէ

ընայն ոչ որ ազգութիւն չէ համարուի: Հրէաները ազգութիւն չեն, նրանք աղանդ են միայն, որովհետեւ նրանք կորցրին ազգութիւնը կազմող երկու գլխաւոր օրգանական գործիչները՝ հայրենիքը և լեզուն: Եթէ նրանք կորցնելով էլ հայրենիքը, պահպանէին իրանց մայրենի ճիւղ լեզուն, կամ կարող էին իրանց ճիւղ լեզուից ստեղծել մի նոր, կենդանի մայրենի լեզու, գուցէ նրանք դեռ կը համարվէին մի առանձին ազգութիւն: Եթէ հրէաները ամեն տեղ միմիայն աղանդ են կազմում: Փրանսիայում հրէան ֆրանսիացի է, Շվեյցարիայում շվեյցարացի է, Գերմանիայում գերմանացի է, Անգլիայում անգլիացի է:

Դարձեալ մի օրինակ: Ունգարացիները եկան Լեւոպոլսի խորքերից և զետեղվեցան Լեւոպոլսի կենտրոնում իրանց համար խորթ և օտար ազգութիւնների մէջ: Նրանք մի տեղ զետեղվեցան և ցիր ու ցան չեղան: Բայց նրանք պահպանեցին և զարգացրին իրանց ազգային լեզուն: Եւ չնայելով որ նրանք զրաւեցին նոր հողեր, ուրեմն ստեղծեցին իրանց համար նոր հայրենիք, չը նայելով որ նրանք հեթանոսներից կաթօլիկ դարձան, ուրեմն փոխեցին

կրօնն էլ—բայց նրանք չը կորցրին իրանց ազգութիւնը, միմիայն այն պատճառով որ չը կորցրին իրանց մայրենի լեզուն և ստեղծեցին մի նոր հայրենիք:

Դարձեալ մի օրինակ: Շվեյցարական ազգութիւնը կազմվեցաւ երեք ազգութիւններից՝ ֆրանսիացիներից, գերմանացիներից և իտալացիներից: Ուրեմն երեք լեզուներ են տիրապետում Շվեյցարիայում, բայց զարձեալ բոլոր շվեյցարացիները միասին վեր առած կազմում են մի ազգութիւն, որովհետեւ ունեն իրանց սեփական հողը, իրանց հայրենիքը:

Ուրեմն ազգութեան գլխաւոր հիմունքները երեք են՝ ցեղը, լեզուն և հայրենիքը:

Բայց ազգութիւնը կարող է գոյութիւն ունենալ և այն ժամանակ, երբ այդ երեք գլխաւոր հիմունքներից երկուսը պահպանվել են: Այդ երկուսն են հայրենիքը և լեզուն:

Եթէ ազգութիւնը պահպանել է իր հայրենիքը, իսկ կորցրել է իր լեզուն, նա կը կորչէ որպէս ազգութիւն, բայց ինքն իրանից կարող է ստեղծել մի նոր ազգութիւն, կամ նա կը կանխի մի աւելի մեծ, կամ բարոյապէս

աւելի ուժեղ ազգութիւնից, ինչպէս օրինակ լեհացիները պրուսիական Պոզնանի մէջ: Եթէ մի ազգութիւն կորցրել է իր հայրենիքը և պահպանել է իր լեզուն, նա կը կորչէ, եթէ երկրազնտիս մի ուրիշ տեղ չը ստեղծի իր համար մի նոր առանձնական հայրենիք, ինչպէս օրինակ ունգարացիները կամ ամերիկացիներն են արեւ Իսկ եթէ նա չը կարողացաւ իր համար ստեղծել մի նոր, առանձնական հայրենիք, այլ ցիր ու ցան եղաւ այլ ազգութիւնների մէջ,—այն ժամանակ շուտով կը կորչէ և նրա մայրենի լեզուն էլ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս օրերս վախճանվեցաւ ԹԻՖԼԻՍԻՄ Վլադիմիր Իվանովիչ Ժէլիսովսկի, որ երկար ժամանակ ուսուցիչ էր Գլխավոր դպրոցի Գլխավոր դիւրիկտոր էր և վերջապէս ուսումնարանական հոգաբարձուի օգնական էր: Վերջին երկու երեք տարիներ նա ծառայութենից հրաժարական տուած էր և մասնաւոր մարդու պէս էր ապրում Թիֆլիսում:

«Голосъ» լրագրի թղթակիցը, խօսելով «Մշակի» յօդուածի մասին Թիֆլիսի Գլխավոր վերաբերութեամբ, անցնում է տեղական մամուլի դրութեան խնդրին: «Չը նայելով բոլոր արգելքներին, պէտք է խոստովանվել, ասում է ռուս լրագիրը, որ տե-

ղական մամուլը հազիւ դաւաճանում էր այն բարձր կոչմանը, որին պէտք է նուիրվի և բերեց մեր հասարակական զարգացմանը անհերքելի օգուտ: Մեզ վրա միջնադարական տպագրութիւն գործեց այն լուրը, որ զաւառական մամուլի դրութիւնը կը բարձրվի: Մեր տեղական մամուլի վերջին պրօցէսների շարքը ապացուցեց կարծեմ որ ցենզուրան միզ մօտ էլ, զաւառներում դարձել է մի առանցիկ օնիկ (այսինքն հնացած հիմնարկութիւն), աւելացնում է «Голосъ» լրագիրը: Գաւառները, աւելի քան թէ մայրաքաղաքները պահանջ են զգում այն պայմանների փոփոխութեան, որոնք ստիպում են մեր հասարակութեանը անտարբեր կերպով վերաբերվել դէպի մեր կենսի բազմակողմանի առաջադիմութիւնը:

ՄՈՍԿՎԱՅԻՆ, աշակերտ լեւալական զարդի Առաւելաճատուր Իվանովիչից ստացանք 10 ռուբլ յօդուած վասպուրականի հայ սովետականներին:

Վաղը, չորեքշաբթի օր, պ. Կորիձէ երգիչը տալու է Արծրունու թատրոնում սի կոնցէրտ, վրաց սիրողների մասնակցութեամբ: Պ. Կորիձէ երգեցողութիւնը Խաւիայում է սովորել և արդէն մի քանի տարի է երգում է Խաւիայի ամենայայտնի թատրոններում:

Վանից, սովետական յանձնաժողովի նախագահ Խորիման հայրիկից ստացանք երկու օր առաջ հետեւեալ հաւաքի: «Չը նայելով իր խորին չորակալութիւնը կը յայտնել: Առաւ անձրևներէն հունձքերը կառատանաւ: Հաւեցուցաւ կը զրկենք: Կը յուսանք որ բարերարաց չնորձը ժողովուրդը ներկայ վտանգէն կազաւորի, եթէ նուիրաւորութիւնը դարձեալ չառնական մինչև աշունքը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՆԴՈՆԻ ՄԻԹԻՆԿԻ

Ահա բաւական ատեն է ի վեր սպասուած Միթինին ամսոյս 6-ին (Ռ. Ն. Տ.) տեղի ունեցաւ: Ի Լոնտրա ընդ նախագահութեամբ

13 հազար քիլո ցորեան նուիրած է սովետական Սեբաստիայի ամբարէն: Բայց դեռ մինչ այսօր մէկ չափ ցորեան անգամ չը հասաւ ոչ վան, ոչ Բալթիկ, ոչ Ալպիներ, որք սոված դաւաճաց գլխաւորներն են, և չը գիտեմք թէ երբ կամ երբեք պիտի հասնին թէն եթէ ճամբայ հանուած լինէին, ոչ թէ հասած կը լինէին տեղերն, այլ մինչ Կասպի ծովն անգամ կրնային հասնել, զի կամ հրէական յունկարին մէջ հրատարակուեցաւ: Բայց ոչ ապաքէն այս այն կառավարութիւնն է որ ասանաւորութիւն, կենաց պահպանութիւն, իրաւանց հաւասարութիւն և այլն և այլն սրբազան չնորհներ արած է ??? Իւր հպատակաց. միթէ 13 հազար քիլո ցորեան խոստանալէ վերջ չը պիտի չորհէ: Միթէ տեսնուած է մինչ ցարդ այսպիսի խոստումագործութիւն: Մի և նոյն կառավարութիւն 200 քիլո ալ վանայ ամբարէն չնորհած էր, բայց մինչ և չը չորհուեցաւ այդ նուէրն ալ: Այսպիսի պարագայի մէջ ինչպէս կարելի է չը յափշտակուի և չը հիանալ այն մեծ և սքանչելի մարդասիրութեան վրայ, զոր ցոյց տուաւ քրիստոնէութեան, քաղաքակրթութեան և ազատութեան ձԼՇՊՄԱՐԻՏ (և ոչ թէ անգլիականի նման) բարեկամ ամենողորմած Աղեքսանդր Բ. Կայսրն ուստաց և բոլոր հաւատացողը, (վերջնայ համար չիք ուրիշ Կայսր) նուիրելով Հայաստանի սովետական 10 հազար ֆրանկ, որ Կ. Պոլսոյ կեդր. մասնաժողովին յանձնուած լինեցած է զոյգ ընդ համբաւուն որ նոյն նուէրն հռչակեց: Ապտիւլ Համիդի և Աղեքսանդր Բ. Օղոս. Կայսրն կառավարութիւնների տարբերութիւնը թող տեսնեն մինչև իսկ այն ազգեր, որք իրոյ Պիղոսֆիլիի ախոռով կուրացած են: Յորմէ հետէ սով կը տրիք մինչև այսօր դեռ ոչ մէկ տեղէ արմաթը չը հասաւ այստեղ. այդ է պատճառն որ երթալով կը թանգանայ ամեն ուտեստի գին: Ոչ որ կարող էր բերել բացի կառավարութեան, բայց նա ալ չը բերաւ: Չը կարծէք թէ չէր կարող արմաթը բերել վան, այլ չուղեց, պատճառն ասեցինք արդէն: Բայց պաշտօնեաների հետեւեալ ահաւել. գործը որ լսէք, ինչ պիտի ասէք, փոխանակ սոված աղէտներն թեթեւեղու, փոխանակ դրամ և հաց տալու ժողովրդեան, փոխանակ չնորհուլուն նորա հարկերն, փոխանակ յետաձգելու իւր ամեն պահանջումներն, նոյն իսկ այս տաղանդալից ժամանա-

կին մէջ մեծ խնդրուած է ամբարէնը հաւաքել տուրքերն, հայրեր կը բանտարկէ, որոց ընտանիք անօթի կը մաւնին տան մէջ, որդիք կը բանտարկէ, որք իրենց ծնողաց միակ միջնորդներն են կենաց միջոցն էին: Նոքա որք լիար արկը փոխանակ 3 զրուշի որ սովորական գինն էր, այժմ 80 զրուշ գինը ստիպուած են, կը հրաւիրվին մեր արդարախոս կառավարութիւնէն տուրք տալ: Մինչ աշխարհի չորս կողմերէն ստակ կը թափի վան տնտեսական աղաւելու, տեղւոյ կառավարութիւնը անհոգ և անփութ կը հաւաքէ իւր տուրքերն կորզելով սովածի ձեռքէն այն լուսնից, որ մուրալով ձեռք բերած էր մէկ օրական պարէն հայթայթելու: Կաղաչեմ ցոյց տուէք այդպէս պատմութեան մէջ սորա նման անգութ և անխիղճ օրինակ կայ, զոր մեր կառավարութիւնն ցոյց կը տայ: Եւ դեռ դժբաղդապէս կան այնպիսի մարդեր (որոց մարմինն միայն մարդկային, իսկ խելքը անդանի է) որ կը ցնորին յուսով թէ թուրք կառավարութիւնը ինքնաթիւրքով և կամ լոկ բարոյական ճնշումով իւր քրիստոնէայ հպատակաց վիճակը պիտի բարելաւէ, այն թուրք կառավարութիւնը, որ մասնաւոր քանիք սով առաջ կը բերէ, որպէս զի իւր հպատակ քրիստոնէաներն կոտորէ: Եւ որպէս զի սովուն տաղանդն բոլորովին ծանր և ծանրեր լինի, մի կողմէն կը փութայ սովակի խառնութեամբ հաւաքել տուրքերն այնպիսի ժողովուրդէ, որոյ իւրաքանչիւր դասակարգին մէջ բազմաթիւ սովամահներ կը լինին ամեն օր և ամեն ժամ: Ժամանակակից պատմաբանից կը յանձնարարեմ թուրք կառավարութեան այս ընթացքը, այս ժողովրդապաշտութիւն, այս հրէշութիւն, որ նոքա արձանագրեան պատմական էջերու մէջ: Ես կանցնեմ նոյն կառավարութեան ուրիշ զաղտնարարութիւնն ալ պատմել, որ Պիլմանի, Աֆղանիստանի և Զուլուֆուստանի մէջ անգամ կարելի չէ յուսալ թէ իւր օրինակն ունի: Ահա թէ ինչ է այն:

Այս տարւան ձմեռն սովորականէն շատ աւելի երկարատև և շատ աւելի ձիւնաբեւ լինելով ինչպէս մարդոց նոյնպէս և կենդանեաց համար սով եղաւ, որով միլիոնաւոր ոչխարներ ջարդվեցան և հազար ոչխար ունեցողն այժմ մէկ հատ անգամ չունի: Իսկ կառավարութիւնն ցիտակալով այս բան, փութացաւ կոտորածի ստատկութեան առաջ մար-

դիկ իրեկ և համբել տուաւ ոչխարներն: Համբելուն ետք երկու շաբաթ քաջեց կամ ոչ, կոտորածն սկսաւ, իսկ կառավարութիւնը զիականներն աչքի առաջ տեսնելով հանդերձ չուղէր իսկ պահանջէն կենալ, այլ ընդհակառակն առանց մէկ զրուշ գլխու, մեծ խառնութեամբ և փութով հաւաքել կը ջանայ ոչխարաց տուրքն (կապուտ) որ հատի 3 զրուշ *) ոսկի ստակն է: Հաղաբաւոր ոչխարատերներ որ այսօր չունին և ոչ մի հատ ստիպուած են վճարել 3-ական զրուշ տուրք վասն այն ոչխարաց, որոց գիականներն տանց քով խոնուած մահ կը սպառնան մարդոց իրենց հատով: Բայց պիտի ասէք թէ միայն հայերն կը նեղուին այդ բաներէն, որք և կամ չուրի այդ հաւաքուածքն: Այո, զի կառավարութիւնը հայերն կը նեղուին, վասնզի կառավարութիւնը ամեն ժամանակ տուրք հաւաքած ատեն միայն հայոց վրայ ստակով խոստովութիւն կը բանեցունէ, ինչպէս և այժմ, իսկ թիւրք և քրդաց վրայ (վերջնայ մի մասն արդէն տուրքէ ազատ է) ամենին չը ծանրանար. կամաց կամաց կ'առնէ անոնցմէ, մէկ մասն կը նուիրէ, մի մասն ալ տարիներով կը յետաձգէ: Ոստիկան գիտուորներն երբ հարկապահանջի պաշտօնով գիւղեր խրուին, ըսաւ քիւրդի դիւր չեն ինչաւ, այլ միայն հայոց գիւղեր կը նստեն, որ անխիղճ սրտով տարեն հայերը չուայ և զեղին ծախքեր անել տալով իրենց համար և կը ծեծեն ու կը տանջեն հայերն իրենց ծառայեցունելով:

Ահա ասոնք և այսպիսի միջոցներ են զորս կառավարութիւնը ձեռք կ'առնու անհրաժեշտ սովուն տալու համար: Ահա ասոնք են նորա միակ միջոցներն, որոնք սովուն բարձման թէ սատկութեան կրնան ծառայել, ընթերցողաց կը թողուած դատել:

Գառնեցի պատմել թէ մեր աղջկային ասպարէզին մէջ ինչ միջոցներ ձեռք առնուած են սովուն աղետներն թեթեւեղու: Այո, միջոցներ ի գործ դրուած են և կը դրուին, բայց դժբաւ աղէտներն ամբողջութեամբ կրնան ծառայել, իսկ սովը բառնալու կարող չեն, զի ձեռք առնուած միակ միջոցն է հաց կամ դրամ տալ հայ սովեց, որ չը մոռնին: Թէ տուած ցորեն և թէ դրամն ոչ թէ սովը բառնալու կրնան ծառայել, այլ միմիայն օրէ 20 կողմէ կին:

*) 3 զրուշ ոսկի ստակն հաւատարմ է ռուսաց 20 կողմէ կին:

Լորտ Բաղադարական: Արտ մանրամասնութիւնները Լոնտոնայի թերթերէն թարգմանելու դժուարութիւնը չեմ կարծեր որ ունենաք. բայց և այնպէս՝ այս մարդասիրական զործին մի քանի կէտերը զրի առնուլ աւելորդ չեմ համարիր:

Միթիւնը կը բաղկանայ 200-ի չափ անձերէ: Նախ՝ Լորտ Բաղադարական ընտիր ատենաբանութեամբ մը ատենը բացաւ, և ապա Անդր. Յանձնաժողովոյն զանազան Պարոն Հէնրիք՝ խնդրոյն վրայ մինչև ցարդ ստացած տեղեկութիւնները ժողովոյն ներկայեց. յետոյ Անդր. Պ. ձէյմս Պրայս խօսք առնելով ընդհանուր տեղեկութիւն մը տուաւ սովոր կերպին վրայ. բացատրեց թէ Փոքր-Ասիոյ ո՞ր կողմերն է, թէ ո՞րչափ տարածութիւն ունի, թէ ի՞նչ ժողովուրդներէ և կրօններէ կը բաղկանայ. թէ ի՞նչ պատճառներէ յառաջ եկած է, և թէ վերջապէս Անդր. ազգին կը պատկանի այդ թշուառ երկրին օգնութեան ձեռք կարկառել, քանի որ, կրօն, Փոքրուն Ասիոյ զմեզ պաշտպան հրատարակեցինք ընդհանուր աշխարհի առջև, և այլն և այլն: Աստիք Պ. ձէյմս պարզ և մէկին եղանակաւ բացատրեց յետոյ, Պրնայի հաղորդագրութեամբ (Մաթթ) ոտք եկաւ: Այս անձը թուրք-Ռուս պատերազմին սկիզբը՝ նախորդ կառավարութեան կողմէն յատուկ պաշտօնով մ'արար ծանրորդութիւն մ'ըրած էր ի նշանատան, և ի զարմին զիրք մ'ալ հրատարակած է «Հարիւրապետ Պրնայի ձիւ վրայ» մակագրով, որոյ մէջ հայոցս նկատմամբ հեղինակները կը խօսի և մաս մը ճշմարտութեանց հետ մեծ մաս մ'ալ թիւր և սխալ տեղեկութիւններ կուտայ: Թայմը լրագիրը, ժամանակին իւր զիրքը քննադատելով, իրաւամբ կրէ թէ՛ «ազգային իմաստիւն և հանգամանաց նկատմամբ ձիւ վրայ քաղաւած տեղեկութիւնը արժանահատաւ չեն կարող լինիլ»: Պրնայի հաղորդագրութեան մի քաղաքի մէջ հազիւ մի քանի ժամ

կամ առ առաւելն մի կամ երկու օր կեցած է, և այն ալ կառավարական պաշտօնատունէ ի պաշտօնատուն օժեանակով, որոյ տեղեկութեանց ուղղակի աղբիւրն եղած է, ուստի այն Հայն՝ որ իւր զիրքը կարգաւած էր կամ անոր վրայ գաղափար մը ունեցած, անխորժ տպաւորութեան յիշատակ մը կը կրէր. սակայն սովեցող Միթիւնին մէջ ըրած պարզ և անպաճառ՝ ատենախօսութիւնն ամենազգայուն կերպիւ կը նկարագրէր հէք սովեցող թշուառութիւնն այն երկրներուն մէջ ուսկից ինչ անցած էր: Ձիւս զանազան յուզեց երբոր ըսաւ. «Ճեռակայեցէք, Տիկնայք իմ և Տեաքը, երբ մէք այժմ ձոյն սեղաններու առջև կը բազմեմք, առատ և կուշտ մէք խորտիկները կը ծաշակեմք, մտաբերեցէք որ անպիսի բիւրաւոր ողորմելիք անխորտիր Քրիստոնէայ և Մահմետականք՝ ինչ կուտեն. ահաւասիկ ցուցնեմ Ձեզ կերածին, ըսաւ, և հանցեց զրպանէն ծրարել մը, զոր իւր մէկ բարեկամն իրեն զրկեր էր, պատառ մը այն հայցն՝ որով այդ ժողովուրդները կը կերակրուէին. և ահաւասիկ, ըսաւ, իրենց խորտիկն ու համազամբ, որոց տասներկու երորդ մասն հազիւ հացի զոյացութիւն է, մնացեալն ահա կը տեսնէք որ ծառի կեղեկներ, խոտեր և այլ չը զիտեմ ինչ են: Վերջապէս այդ զինուորական խիստ բնաւորութեան և կրթութեան ներքե աղբիւրի փափուկ սիրտ մը ցոյց տալն անակնկալ բան մ'եղաւ, և սիրելի յիշատակի մը՝ տպաւորութիւն ըրաւ իմ վրայ, տաքալոյս չը կայ որ ինչպէս շատերն ալ նոյն տպաւորութիւնն ունեցան:

Նաե մեր Լոնտոնայի և ընդհանրապէս անդ զրականութեամբ զբաղեալ Պ. Յակոբեան ալ ատենախօսեց, զխաւարապէս այն թէ՛ Հայք ուր որ ազատ գտնուեցան այդ աղետէն, չը դանդաղեցան իրենց հայրենակցաց ձեռնտու գտնուելու և այլն, և այլ. Հուսկ յետոյ Պ. Արսէնեան Մանչեսթըրի Հայկական մաս-

նախընի կողմանէ շնորհակալութիւն յայտնեց ժողովին, որ իրենց երկրին աղետիցը կարեկցութիւն և զուլթ ցոյց կուտար:

Արդ, ազիւ բարեկամ, Պրնայի հազարապետին խօսքերն հարկ է որ մէք Հայքս աւելի ուշադրութեան առնուեմք. վասն զի ինչպիսի աւելի մեզ կը պատկանի և մեր ապագային կը սպառնայ:

Շատ սխալ է այն գրութիւնն, որ ամեն ինչ օտարէն կը սպասէ, որով կարծես թէ կամովին թշուառութեան կը դիմէ: Ո՛ հայ, դու նախ պէտք է քեզի օգնես, որ քեզի օգնող գտնաս. այս է աշխարհի փորձառութիւնն . . . :

Ուստի՝ մեր աղնուալիտ ազգայնոց, և մասնաւորապէս հարուստներուն ուշը կը հրաւիրեմ, որ իրենցմէ մի քանի հարիւր ոսկի պատկանելով բան մը չեն զգար. նըմանապէս անոնց՝ որք կարող են իրենց զուարճութիւններէն և ընտանեկան սեղանէն բաժին մը հանել այլ և այլ զրկանաց ենթարկեալ դժբաղդ ժողովրդոց, որոնք՝ «մի փշուր հաց» կ'աղաղակեն: Ձեմ կարող չը յիշել նաեւ անոնք՝ որք իրենց կարողութեան վեր օգնած են. փառք և պատիւ այսպիսիներու: (Մասիս)

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

ԲՈՒՌՆԵՍ, 19 յունիսի: Լուր է տարածված, որ Անգլիան հրաւիրեց Բուլղարիային 180,000 Փոլտո ստորինդ վճարել թիւրքիս յիստերիզմի երկաթուղու համար:

ԲԱՒՈՒՅԱ, 18 յունիսի: Մի պատգամաւորութիւն Դուլցինոյից եկաւ Սկուտարի նահանգապետի մօտ և նրան հարց տաւ յարկեց Դուլցինոն չընդօրոյցինք զիջելու մասին: Նահանգապետը պատասխանեց, որ ինքը չը գիտէ և խորհուրդ տուեց հազար Դուլցինոյի պաշտպանութեան համար: Այլանական

միութիւնը 600 զինուորած մարդ ուղարկեց Դուլցինոյի պաշտպանութեան համար, իսկ նրա պահպան զօրքերը հեռացան Սկուտարի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի: Մեծ ոկիանոսի ռուսաց նաւատորմի շտաբի զինաւոր նշանակված է ծովապետ Իսլանդեզով, որ այժմ Նապոլիայում է:

ԲԵՐԼԻՆ, 20 յունիսի: Երէկվան նիստի ժամանակ վերջնականապէս ստորագրված է կոնցիդերնցիայի վճիռների ակտը, ընդունված է միաբան շրջաբերական, որով կոնցիդերնցիայի վճիռները պէտք է հաղորդվեն Ռուս-բիւլային և Եւրոպային:

ԲԵՐԼԻՆ, 20 յունիսի: Նոյնօրագրի նահանգապետ Հասան-փաշա ցանկանալով ընդգիծանալ բրիտանականների և թիւրքերի կրօնին, սպանված է ալբանական միութեան կողմնակիցներից: Հեռագրական հաղորդակցութիւնները ընդհատված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակ առաջին շրջանի արժէ 93 ռ. 75 կ., երկրորդ 92 1/8 ռ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 25 կ., ներքին 5% տոմսին փոխառութեան տոմսակ արժէ 229 ռ. 50 կ., երկրորդ 224 ռ., արեւելեան տոմսին փոխառութեան տոմսակ 92 ռ., երկրորդ 91 ռ. 75 կ., երրորդ 91 1/8 ռ., ոսկի 7 ռ. 72 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25 1/16 պէնս, ռուսաց 100 ռ. Բերլինի վրա 130 մարկ, Համբուրգի վրա 219 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 270 ֆր. 50 սանտիմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յունիսի 22: «ИВНАЛИДЪ» լրագիրը հաղորդում է, որ կովկասեան 2-որդ զինուորական կորպուսի գլխաւոր Տէր-Ղուկասով 4 ամսով արձակուրդ է ստանում արտասահմանում բժշկվելու համար:

ՑԷՏԻՆԻԷ, 21 յունիսի: Այստեղ հասանալիս ցեղերի մի քանի առաջնորդներ և հանդիսապէս յայտնեցին, որ բոլորովին

որ կերակուր կը տայ աղքատաց մասնաւոր տան մը մէջ մասնաւոր պատրաստութեամբ մը: Միայն կիրակի օրերը բացառութիւն են իբրեւ սուրբ օր: Նոյն տեղանին վրա օրական 200-էն 250-ի չափ աղքատներ կը կերակուրին: Դաիւն կը հոգացուի թուրքաբանակ ըողբականաց մէջ բացուած ընդհանուր հանգանակութեամբ մը, որ դեռ կը շարունակուի: Ինչպէս կը տեսնուի ձեռք առնուած բուրդ միջոցներն հազիւ թէ ժողովուրդը ներկայ տուէն անձնատուր աղատէն մինչև նոր հոնձի ժամանակ: Իսկ թէ նոր հոնձն կատարեալ յաջողութիւն կը խոստանայ սովն անհետացնելու, զայդ կը խոսենք քիչ մը վերջ:

3) Կը գտնուի այժմ զրկել թէ սովն մինչև ցարդ ինչ չափ կոտորած արեր է և դեռ կանէ: Երկու կայ սովը որչափ որ հայերը կոտորելու համար նիւթուած մեքենայութեան մը արդիւնք լինեն յայտնի է արդէն, բայց արդարութիւն կը պահանջէ խոստովանել թէ առաւելապէս քրդաց և թըրքաց քան հայոց աղետները և կորստաւթիքը եղաւ և պիտի լինի, այնպէս որ զուրն զոր փորեցին, նոքա ինկան անոր մէջ կրնանք ասել կատարելապէս: Վասն զի մինչև ցարդ սովամահ հայոց թիւը 500-ի չը հասնէր, իսկ քրդաց թիւը արդէ միւս կողմը չը կայ, բայց ամեն կերպով հաստատուած է որ իրենց բոլոր թուոյն 1/10-էն աւելին կոտորուած է սովէն կամ ցրուած է անդարձ կորուստի մէջ: Քիւրդերու զիջանքն սովորական է տեսնել նոյն իսկ քաղաքի փողոցներուն մէջ ամեն օր և մինչև իսկ կառավարութեան դրան առջև: Քիւրդեր ուրիշ զրկեղեր երթալու ճանապարհաց վրայ նոյնպէս ստիպ կը տեսնուին քրդաց զիջանքը, որք ինկած են սովամահ: Արդեւ քիւրդ զիջեղ կան որ փճացեր են կամ մահով կամ գաղթելով: Վերջապէս համառօտ ասել սովը իւր բոլոր ահաւելի և բնութիւնները քրդաց մէջ երևան հանեց և իւր բոլոր ու ամենամեծ ծանրութիւնը նոքա վրա թափեց: Միողական, որդիական, եղբայրական և ամուսնական կապերու խղճմն սովի պատճառաւ միայն քրդաց մէջ տեղի ունեցան, իսկ հայոց մէջ ոչ երբէք: Թէպէտ հայ մեռածներ եղան, բայց իրենց ընտանեաց զրկեղ փնջին իրենց շունչ, իսկ թիւրքերու նման յանց ճանապարհաց սովամահ ինչալ մեռնել և անթաղ մնալով թաշնոց և դաղանաց

կեր լինի և այն այսպիսի տխուր արկածներ մինչև ցարդ երբէք չը տեսնուեցան և չը պիտի տեսնուին հայոց մէջ: Այս անհուն տարբերութեան պատճառը այն էր, որ քրդերն բնաւ արմատիկ չուէն, զի նոքա հողագործ չեն, իսկ հայերն որչափ ալ խեղճ էին, բայց և այնպէս աւելի արմատիկ ունէին և ունեն քան քրդեր: Հայոց ունեւորներն օգնեցին չուներաց, մինչև որ սովեցող խնամատու մասնաժողովն օգնութեան հասաւ, ալ այնուհետեւ հայ արարած մը սովէ չը մնաւ և մեծ յոյս կայ թէ այլ ևս չը պիտի մեռնին: Նոյնպէս կենդանեաց կորուստն ալ քրդաց մէջ աւելի շատ եղաւ քան հայոց: Ձիւ հայոց խոտի և յարկի պաշարներն ալ համամատելով քրդաց ունեւորներուն՝ աւելի շատ էին: Բայց աստի քրդաց մէջ ժամատու մահ մ'ալ ինչպաւ անասնոց զիջանքն և հում միս ուտելէ, որ ոչ նուազ կոտորած տուաւ նոքա, և որ, կը վախեց թէ փոխադրուելով ընդարձակի և ընդհանուր շարք առաջ բերել, զի բոլոր զիջեղու մէջ անթիւ անասնոց զիջանքն կան ձգուած արեւուն դէմ, որք կրնան օդն ապկանել: Սովը առաջ բերելու համար մեքենայ պատրաստողն եթէ գիտնար թէ մեծ կորուստ և մեծ հարուած քրդաց կը սահմանուէր, անշուշտ չը պիտի անէր զայս, բայց զի յիմար էր, չը կրցաւ խորհել և հաւաքագործին մէկ աչքն հանել տալու համար իւր երկու աչք հանել ստիպուողին նմանեցաւ:

Վերջիւնեալ երեք գլխաւոր գլուխները զրկել ետք թէպէտ բաւական երկար եղաւ այս նամակը, բայց որպէս զի կատարեալ և որչափ կարելի է աւելորդ տեղեկագիր մը լինի այս, կարեւոր կը համարեմ յիշել այստեղ նաեւ թէ սովն ինչ աստիճան սաստիկ է և թէ յաջորդ հնձոց ժամանակ վերջապէս յոյս կայ թէ ոչ: Այդ երկուքն ալ յիշենք և վերջացունենք:

ա) Սովուն աստիպութեան աստիճանն իմանալու համար մեր արդոյ ընթերցողներն թող բաղդատեն հետեւ թւերն իրարու հետ:

Ս Օ վ ի ն ա ռ ա շ և զ ա ծ գ ի ն : 1 օխա հայ 30 փարայ անցուկ զրաւ, (1 լիտ), 6 օխա ալիւր 3—4 զրուշ, (1 չափ) 33 օխա ցորեն 20—25 զրուշ, 1 օխա իւղ 10—12 զրուշ, 1 օխա պանիր 3—3 1/2 զրուշ, 1 հատ հաւկիթ 1—2 փարա, 1 օխ բրինձ 4—4 1/2 զրուշ, 6 օխ խստոր 8—9

զրուշ, 6 օխ բակլա 4—5 զրուշ, 1 օխ միս 2—2 1/2 զրուշ, 6 օխ ճակնդեղ 10—15 փարա, 6 օխ կտաւատի իւղ 30 զրուշ, 6 օխ չամիչ 18—20 զրուշ, (1 չափ) 33 օխ դարի 8—10 *) (չափ), 33 օխ տարեկան 12—15 զրուշ, (1 չափ) 33 օխ կտաւատ 25—30 զրուշ, 1 բեռ յարդ 1 բարդ (30 խուրձ) խոտ 20—22 զրուշ, 1 լիտ կտաւատի դիրտ (կուսք) 2—2 զրուշ, Հիւսիս-կուսան գին. 1 օխ հաց 8—9—11—12 զրուշ անցուկ, (1 լիտ) 6 օխ ալիւր 75—85 զրուշ, (1 չափ) 33 օխ ցորեն 400—450 զրուշ, 1 օխ իւղ 44—48 զրուշ, 1 օխ պանիր 12—14 զրուշ, 1 հատ հաւկիթ 18—20 փարա, 1 օխ բրինձ 20—22 զրուշ, 6 օխ խստոր 140—150 զրուշ, 6 օխ բակլա 36—40 զրուշ, 1 օխ միս 10—12 զրուշ, 6 օխ ճակնդեղ 15—18 զրուշ, 6 օխ կտաւատի իւղ 180 զրուշ, 6 օխ չամիչ 96 զրուշ, (1 չափ) 33 օխ դարի 350—400 զրուշ, (1 չափ) 33 օխ տարեկան 300—350 զրուշ, (1 չափ) 33 օխ կտաւատ 400—430 զրուշ, 1 բեռ յարդ 160—180 զրուշ, 1 բարդ (30 խուրձ) խոտ 240—260 զրուշ, 1 լիտ կտաւատի դիրտ (կուսք) 50—60 զրուշ:

Բաւական կը համարեմք այսպիսի դնել. մնացեալն ալ վերոյիշեալ համեմատութեամբ պէտք է համեմար: Բայց յիշել արժան է որ թէ յիշուած նպատակներն և թէ ուրիշ ուտեստներն անտեսով միայն զին ունեն, իսկ ուղուած ատեն անմիջապէս ձեռք բերել կարելի չէ, այլ մեծ դժուարութեամբ կը գտնուին: Պէտք է գիտնալ նաեւ թէ գիններն միայն մէկ ամիսի մէջ յանկարծական կերպով չը բարձրացան այնչափ, որչափ նշանակած ենք, այլ քիչ քիչ, օրէօր աւելնալով հասան ներկայ դրոյն, զոր նշանակեցինք ձիւդ այսօրի հրապարակագրին համեմատ:

Երկարաբան չը լինելու համար ընթերցողաց կը թողուր մակարերել և ինքն իրեննուն դատել թէ որչափ համեմատ կարողութեան տէր գերդաստաններ կործանեցան նիւթապէս, թէ քանի չափաւոր հարուստ տուներ սնանկացան և թէ վերջապէս

ժողովրդեան այն դասակարգ՝ որ օրական աշխատութեամբ կապեր չունենալով ոչինչ եկամուտ և որ ամեն երկրի մէջ ժողովրդեան մեծամասնութիւնը կը կազմէ, ինչ աստիճան թշուառութեան ենթարկեցաւ այս ահագին թանգութեան երեսէն, որոյ նման երբէք տեսնուած չէ եղեր ի վան ժամանակակից մարդոց օրով և թէ որչափ մեծադուժար պարտքեր դրացան այն դասակարգին վրայ:

Վերջին նիւթերնիս է պատմել թէ սովու բարձման համար ինչ հաւանականութիւն կայ: Առ այժմ ընդհանուր հաւանականութիւնն այս է, թէ առաջիկայ հնձոց ժամանակն կը վերջանայ սովի, ասոր պատճառ այն է որ այս ձմեռ շատ յորդ ձիւներ եկան և ջուրն շատ առատ է, նաեւ զարնան անձրեւներն ալ իրենց ժամանակին եկած են, միայն երկու անգամ անձրեւ մնացած է. եթէ անոնք ալ պէտք եղած օրերն տեղան, ալ կրնանք բոլորովին յուսալ սովու բարձում: Սկիզբնուած արմալքը բաւական են, եթէ արդիւնաւէտ լինին, զի թէպէտ այս դարուն ոչինչ սկիզբնուողութիւն չեղաւ, բայց այնու չափազանց սերմ ցանուած է, որոց բոլոր շատ սքանչելի է առ այժմ: Նաեւ լուրեր հասան այստեղ թէ Ասորեստանի, Քիւրդիստանի և Պարսկաստանի հոնձերն ալ շատ առատ լինելու յոյս կընծայեն: Բայց բոլոր ասոնք ենթադրութեանց օտանանք մէջ են տակաւին և չեն կրնար իրականութեանց տեղ բռնել: Այլ թէ կայ մի բան որ ճշմարիտ է այս մասին, այն է որ եթէ հոնձերն առատ լինին, սովը կը վերջանայ, բայց թէ առատ պիտի լինին, պէտք է ժամանակին սպասել, իսկ թէ հոնձերն առատ չեղան, այն ատեն ինչ պիտի լինի այս երկրին վիճակը, կը ստակամ ասել:

Նամակս վերջացունենէ առաջ մի աւելտիտամ ընթերցողաց, որ այս տեղեկութեանց վրայ վշտացած սրտերնին փոքր ինչ միջոցաւոր լայն աւելտիտ այս է: Մայիս 2-ին դաւաթիս երեսփոխանական ժողովը իւր ներկայ 31 անդամոց 31 քուէներով յորիմեան սրբազան հայրին ժողովրդեան անասման բերկրանաց և բաղձնաց համեմատ ընտրեց առաջնորդ վասպուրականի:

